ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/29055 «26» 12 2016թ.

Ա/Ձ Արտակ Խաչատրյանին
ք. Եղեգնաձոր, Շահումյան 21

Հարգելի պարոն Խաչատրյան

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և Ա/Ձ Արտակ Խաչատրյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 07.06.2016 թվականին կնքված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/96-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռքբերման /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում, որի վերջնաժամկետը սահմանված էր՝ 01.12.2016թ.:

Տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանը համապատասխան գրությունով տեղեկացրել է, որ Ձեր կողմից խախտել է պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի :

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը

նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ա/Ձ Արտակ Խաչատրյանի հետ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/96-2» ծածկագրով կնքված գնման պայմանագրից, որի դեպքում պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում է լուծված:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում եմ Ձեզ սույն Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման հավելված N1 հաստատված կարգի 36-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 7.2 կետով հաշվարկված տույժի գումարը՝ 816120 (ութ հարյուր տասնվեց հազար հարյուր քսան) ՀՀ դրամ (65289567՝ չմատակարարված ապրանքի գումարx0.05%x25օր=816120) երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Գ.Մուրադյան
011 514-373